



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ- 366 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի ապրիլի 16-ի
համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռքբերված մանկական խաղահրապարակի
(քանդված վիճակում, 6,020 կգ ընդհանուր քաշով, 20,000 եվրո արժողությամբ, ներառյալ
բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն)
ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի
կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից
իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում»
ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և
2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված
ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ- 367 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱՅՈՒՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 8-ի N 07/80-2/8418-15 և ապրիլի 9-ի N 06/3-3/8448-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 8-ի N 02/14/4074-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**


1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 116,469,000 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լ.Ա.Ն.Ա. Էդեն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03531534) 2015 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 02Գ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի մատակարարում՝ 116,469,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Սուշեղ Եսիսկոյան Բաբայան

« 01 » 04 2015 թ.

Գարեգին Ա Կրթական կենտրոնի կահավորում
ԾՐԱԳՐԻ

5/1

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կահավորել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա Կրթական կենտրոնը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործոր (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ՝ 06800406:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6	Ծրագրի բյուջեն	116,469,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակիցները և Կրթական կենտրոնից օգտվողները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10 ապրիլ 2015թ. – 01 օգոստոս 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում կահավորել Գարեգին Ա Կրթական կենտրոնը: Աշխատանքներն իրականացվելու են «Լ.Ա.Ն.Ա. Էդեն» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 03531534, ՀՀ, Զ. Երևան, Զանաքեռ 1-ին փող., բիլդ 12) կողմից՝ պայմանագիր 02Գ/015 կնքված 25.03.2015թ.՝ 116,469,000 ՀՀ դրամով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 ապրիլ 2015թ. – 01 օգոստոս 2015թ.:
10	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Գարեգին Ա Կրթական կենտրոնի կահավորում՝ 116,469,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հիշողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարության ֆինանսական բաժնին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կարելի է անմիջական տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ապրիլի 2015 թվականի N Մ- 368 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 07/80-2/8951-15 և ապրիլի 9-ի N 06/3-3/8556-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՆիկԴավ Գրոպ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829142) 2015 թվականի փետրվարի 4-ին կնքված պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների երկրորդ աստիճանի ոռոգման նոր համակարգերի կառուցման նախագծային աշխատանքների իրականացում (3-ին փաթեթ)՝ 31,546,089 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ- 369 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N Մ-1175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի ապրիլի 9-ի N 07/80-2/8449-15 և ապրիլի 3-ի N 06/3-3/8101-15 եզրակացու-
թյունները, և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերություն 2015 թվականի ապրիլի 1-ի N
176 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապե-
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014
թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գոր-
ծարքների մասին» N Մ-1175-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) 1-ին ենթակետում «8,000,000 դրամի չափով» բառերը փոխարինել «6,400,000
դրամի չափով» բառերով.

2) 2-րդ ենթակետում «33,320,000 դրամի չափով» բառերը փոխարինել «26,584,000
դրամի չափով» բառերով.

3) 3-րդ ենթակետում «2,933,376 դրամի չափով» բառերը փոխարինել «2,291,700
դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ- 370 - Ա
քաղ. երևան

**ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ԲԵՄԻ ՍԱԼԱՀԱՏԱԿԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 07/80-2/9377-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8837-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 02/14/4327-15 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4,148,880 դրամ արժողությամբ «Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՄՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի մարտի 30-ին կնքված N 06Ծ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքների իրականացում՝ 4,148,880 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման հիմքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Կառավարության Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ Եպիսկոպոս Բաբայան

«08» 04

2015 թ.

**Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքներ
ԾՐԱԳՐԻ**

5/1

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքները:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	4,148,880 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	30 մարտ 2015թ. – 30 մայիս 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքները՝ 4,148,880 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՄՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00801721, ՀՀ, Զ. Երևան, Ա. Ավետիսյան 118)՝ պայմանագիր կնքված 30.03.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 30 մարտի 2015թ. 30 մայիս 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաց Խորանի բեմի սալահատակի նորոգման աշխատանքները՝ 4,148,880 ՀՀ դրամով առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է ծրագրի իրականացման հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետության բաժնի կողմից և ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի իրականացման ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ապրիլի 2015 թվականի N Մ- 371 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 07/80-2/9436-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8800-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 02/14/4328-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5,232,950 դրամ արժողությամբ «Մայր Տաճարի տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի մարտի 30-ին կնքված N 05Ը/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Տաճարի տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքների իրականացում՝ 5,232,950 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփող հաշվետույթ:

* Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

« 08 »

04

2015 թ.

**Մայր Տաճարի տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքներ
Ծ Ր Ա Գ Ր**

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքները:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործող (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	5,232,950 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	30 մարտ 2015թ. – 30 մայիս 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունները և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքները՝ 5,232,950 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00801721, ՀՀ. Բ. Երևան, Ա. Ավետիսյան 118)՝ պայմանագիր կնքվա 30.03.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 30 մարտի 2015թ. 30 մայիս 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար տարածքի սալահատակի մասնակի նորոգման աշխատանքները՝ 5,232,950 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տնօրենական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետա-համալիրային ծախսերի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի արդյունավետության հսկողություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ - 372 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 15-ի N 07/80-2/9202-15 և ապրիլի 14-ի N 06/18-4/8997-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Սարգիս Բեդոյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված եկեղեցական զանգի (116 կգ ընդհանուր քաշով, 4,300 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Սևան քաղաքի նորակառույց եկեղեցու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


17 ապրիլի 2015 թվականի N Մ- 373 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության 2015 թվականի ապրիլի 15-ի N 07/80-2/9200-15 և ապրիլի 16-ի N 06/5-1/9367-15 եզրա-
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված FORD
TRANSIT մակնիշի միկրոավտոբուսը (2012 թվականի արտադրության, նույնականացման
համարը՝ NMD0XXTRDCA00504, 18,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄՏ)
ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» ավագ
դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված (2011 թվականի
դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի
հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա, 2014 թվականի
հոկտեմբերի 3-ի Մ-1003-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա որոշումների
խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ- 374 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԵՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 07/80-2/8984-15 և ապրիլի 14-ի N 06/5-1/9000-15
եզրակացությունները և հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի 2015
թվականի ապրիլի 14-ի N 01-219 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական
(Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող 2014-2015 թվականների զար-
գացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված (2015
թվականի ապրիլի 3-ի Մ-295-Ա որոշման խմբագրությամբ) ծրագիրը կարդալ հետևյալ
նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք
բերված համակարգչային սարքավորումները և կահույքը (3,017 կգ ընդհանուր քաշով,
180,667 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման
ծախսերը, «Արարատյան» ՏԲԸ-ի տնօրենի կողմից 2014 թվականի հունիսի 1-ին կետում նշված ծրագրի
շրջանակներում:

3. Սույն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի կողմից

Հայ-Ռուսական Համալսարանի 2014-2015 թվականների զարգացման ծրագիր (1 փուլ)

Ծրագրի նպատակներն են • Ժամանակակից գիտական ուղղությունների ու նորարարական մտքի զարգացումն ու Հայաստանում գիտական ազգային ռեսուրսի ստեղծումն ու ընդլայնումը: • Հայաստանում բնագիտական ուղղությունների զարգացումը, այդ ոլորտում գիտական ներուժի մեծացումը: • ՀՀ գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական և հետազոտական համայնությանը և միջազգային մակարդակում նշանակության բարձրացումը՝ ՀՌՀ և ՌԴ առաջատար գիտական կենտրոնների միջև համագործակցության միջոցով, որոնցից են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, «ՄԻՖՆ» միջուկային հետազոտությունների ազգային ինստիտուտը, Մանկա-Պետերբուրգի պոլիտեխնիկական համալսարանը և այլն: • Հայաստանում փորձնական և կիրառական գիտության, ինչպես նաև դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի և ինտելեկտի տեխնոլոգիաների զարգացումը:	1. Ծրագրի նպատակը 
---	--

2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ռուսաստանի Դաշնության կառավարություն
4.	Ծրագիրը կատարողը	Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարան ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփի Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփի Էմինի 123: Բնագավառը՝ կրթություն և գիտություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագիրն ունի շարունակական բնույթ: Ներկայացվող առաջին փուլի բյուջեն կազմում է 55 000 000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ: Ծախսերի նախատեսվող ուղղություններն են. - լաբորատոր սարքավորումներ – 28 742 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ. - ծրագրային ապահովման միջոցներ և տեխնիկական լուծումներ – 23 258 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ. - ծառայություններ և աշխատանքներ – 3 000 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.
7.	Բարեգործության նպատակը	Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի ուսանողները, ասպիրանտները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի սկիզբը՝ 15 դեկտեմբեր 2014 Ծրագրի ավարտը՝ 30 հունիս 2015

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	 Միջոցառումների 15-ից մինչև 2015թ.-ի հունիսի 30 ընկած ժամկետում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները: 1. Տեսագրող գոնդային մանրադիտակի գնում (ներմուծում): Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսագրող գոնդային մանրադիտակի ձեռքբերման պայմանագիր: Տեսագրող գոնդային մանրադիտակի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման ներմուծումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը: 2. Ջերմային վառարանի գնում (ներմուծում): Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել ջերմային վառարանի ձեռքբերման պայմանագիր: Ջերմային վառարանի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը: 3. Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումներ և համալրող սարքեր: Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերման
----	--	---



ՁՆ-5/4.16

գիտակրթական համագործակցության ապահովման, ինչպես նաև արտասահմանյան կրթական լավագույն փորձի և նոր մոտեցումների ներդրմանը:

Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 11.000.000 ռուբլու համարժեք դրամ:

4. Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ներմուծում:

Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված սարքավորումները նախատեսված են ուսումնական գործընթացի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) համար:

Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 6.400 000 ռուբլու համարժեք դրամ:

5. Այլ լաբորատոր սարքավորումների գնում:

Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված այլ լաբորատոր սարքավորումները պետք է ծառայեն գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացին օժանդակելու և ուսանողներին գիտական գործընթացի մեջ ներգրավելու նպատակին:



Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 16.100.000 ռուբլու համարժեք դրամ:

6. Այլ միջոցառումներ:

Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլու համարժեք դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:

12. Համագործակցությունը պնտական կառավարման, տնտեսական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ:

13. Ծրագրի արդյունավետության և արդյունավետության վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը


Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներդրված ընթացիկ և վերջնական ֆինանսական և մեթոդական օգնություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կրթության և գիտության բարեգործական ծրագրերի համակարգման կենտրոնին:



ՁՆ-5/4.16

 	պայմանագիր: Սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 11.000.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը: 4. Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների գնում: Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ձեռքբերման պայմանագիր: Տեսա և ձայնային տեխնիկայի ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.400.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը: 5. Այլ լաբորատոր սարքավորումներ Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման պայմանագրեր: Այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Նախատեսվում է այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերում 16.100.000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր գումարի չափով: 6. Այլ միջոցառումներ Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլուն համարժեք
---	--

 	դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: 1. Տեսադրող գոնդային մանրադիտակի ներմուծում: Տեսադրող գոնդային մանրադիտակը նախատեսված է մագնիսային հատկությունների ուսումնասիրության, կորերի վերլուծության, թունելային մեթոդով հետազոտությունների իրականացման համար: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ: 2. Ջերմային վառարանի ներմուծում: Ջերմային վառարանը թույլ է տալիս իրականացնել բարձր ջերմաստիճանային (մինչև 2000°C) միջավայրի ստեղծում, ինչպես նաև այդ միջավայրում նյութերի ջերմամշակում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ: 3. Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ներմուծում: Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված, հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերումը ուղղված է միջբուհական
---	---



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ապրիլի 2015 թվականի N Մ- 375 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 15-ի N 07/80-2/9203-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8839-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի մասին» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիֆիԷս ՕԻԼ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում «Ռեգուլյար» տեսակի բենզինի մատակարարում՝ 585,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԵՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ապրիլի 2015 թվականի N Մ- 376 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1209-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական
հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 15-ի N 07/80-2/9341-15 և ապրիլի 16-ի N 06/3-3/9366-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 08417664) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Նոր Բայազետի» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում» N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մայ Գարդեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03539587) 2015 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում ոռոգման համակարգի աշխատանքների մատուցում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ - 377 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-352-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի ապրիլի 16-ի N 07/80-2/9378-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8836-15 եզրակացու-
թյունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի ապրիլի 8-ի N 233
գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
կողմից իրականացվող «Արաբկիր եկեղեցու շինարարական աշխատանքներ» ծրագրի
մասին» N Մ-352-Ա որոշման 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «1479016.24 դրամի
չափով» բառերը փոխարինել «1,479,016,240 դրամի չափով» բառերով, և նույն որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի
հունվարի 15-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ - 378 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-225-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի ապրիլի 16-ի N 07/80-2/9371-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8824-15 եզրակացու-
թյունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի ապրիլի 8-ի N 234
գրությունը, որոշում է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
կողմից իրականացվող «Վեհարանից Գանձատուն տանող ճանապարհի առաջին հատվածի
կառուցում» ծրագրի մասին» N Մ-225-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում
կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ
կետերում «28,157,740 դրամ» բառերը փոխարինել «29,784,760 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «01 ապրիլ 2015 թ.»
բառերը փոխարինել «01 հունիս 2015 թ.» բառերով :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2015 թվականի N Մ - 379 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1026-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԻՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-226-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 07/80-2/8988-15 և ապրիլի 11-ի N 06/3-3/8756-15 եզրակացությունները և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2015 թվականի ապրիլի 3-ի N 192 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագրի մասին» N Մ-1026-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի «238,808,517 դրամ» բառերը փոխարինել «209,480,142 դրամ» բառերով:

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված փոփոխություններ կատարել մասին» N Մ-226-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ա. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Հայկական կարմիր խաչի ընկերություն
Գլխավոր քարտուղար՝ ԱՆՆԱ ԵՐԱՅԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
03.04.2015թ.

«Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Դեղորայքի ընդունման հետևողականության բարելավումը՝ ռադիկալ տուբերկուլոզով (այսուհետ՝ SF) հիվանդների բուժման արդյունավետության բարձրացմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	ՀՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլխավ հիմնադրամ, ժնն, Շվեյցարիա
4.	Ծրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարսեյան 21, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ողջ տարածքով, հանրային առողջապահական ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	209 480 142 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ բոլոր մարզերի SF հիվանդներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը

21 5/6.6

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Ծրագրի շրջանակներում՝ ըստ ուղղությունների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝

1. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով սոցիալական աշխատողների համար կրթական միջոցառումների իրականացում

Մատակարար կազմակերպությունն իր հիմնական անձնակազմի միջոցով երևան քաղաքի և 22 մարզերի թվով 40 սոցիալական աշխատողների վերապատրաստել է՝ ռեգուլյար SF և դեդոռայքային SF (այսուհետ՝ ԴԿՏԲ) հիվանդների բուժման հետևողականության բարձրացման ուղղված սույն առաջադրանքով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման համար: Դասընթացներն իրականացվել են 2014 թվականի դեկտեմբերին, թվով երկու երկօրյա դասընթաց:

Բյուջեն կազմել է 567 980 դրամ:


2. Սոցիալական աշխատողների կողմից իրականացվող կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ամիսը չորս անգամ 40 սոցիալական աշխատողների կողմից իրականացվել են և իրականացվելու են կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ ամբուլատոր բուժման փուլում գտնվող ռեգուլյար SF և ԴԿ-SF հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար հանրապետության ողջ տարածքում:

Աշխատանքները ներառում են՝

1.1 Սոցիալական աշխատողների այցելություններ հիվանդների տուն՝ նրանց կենցաղային պայմաններին ծանոթանալու, հիվանդների ու նրանց ընտանիքի անդամներին SF հիվանդության վերաբերյալ ուսուցանելու, SF-ն լուսաբանող տեղեկատվական նյութերի հատկացման նպատակով՝ տվյալ հիվանդի բուժման ընթացքում առնվազն մեկ անգամ: Աշխատանքների արդյունքում ընտանիքի անդամները կծանոթանան SF-

ԲՈՒՄ
5/6.6



ից պաշտպանման միջոցներին, հիվանդի նկատմամբ ցուցաբերվող վարքին և հիվանդի նկատմամբ խարանի վերացմանը:

Սոցիալական աշխատողները ապահովվում են ախտահանիչ միջոցներով ձեռքերի մշակման թաց անձեռոցիկներ, սպիրտային զնդիկներ՝ ախտահանիչ գելեր:

Բյուջեն՝ 18 431 603 ՀՀ դրամ

1.2 Բուժման հետևողականության բարձրացման նպատակով SF հիվանդների համար կրթական միջոցառումների կազմակերպումը

կիրականացվի սոցիալական աշխատողների կողմից՝ հավասարը հավասարին սկզբունքով: Դասընթացները կիրականացվեն այն SF կաբինետներում, որտեղ հիվանդները ստանում են իրենց ամբուլատոր բուժման փուլը: Յուրաքանչյուր եռամսյակ կիրականացվի 1.5 ժամ տևողությամբ 12 դասընթաց, կամ ընդհանուր առմամբ 48 դասընթաց 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ. հունիսն ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր խումբ բաղկացած կլինի առավելագույնը 10 հիվանդից: Մասնակիցները կապահովվեն թեթև սննդով և զրեւական պիտույքներով:

Բյուջեն՝ 856 626 ՀՀ դրամ

3. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով SF հիվանդներին սննդային փաթեթների բաշխում /քրեակատարողական հիմնարկներում/

Սոցիալական աջակցություն է տրամադրվում քրեակատարողական հիմնարկներում գտնվող բոլոր SF հիվանդներին (առավելագույնը՝ 40 հիվանդ յուրաքանչյուր շաբաթ):

ԲՈՒՄ
5/6.6

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ՏԲ հիվանդները ծրագրի իրականացման ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2015 թ. հունիսի 30-ը, շաբաթական մեկ անգամ ստանում են սննդային փաթեթներ հետևյալ բաղադրությամբ

- 1) Պահածոյացված միս - առնվազն 400գ
- 2) Թթվասեր և կաթնաշոռ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)
- 3) Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով)
- 4) Կաթ - մեկ լիտր (պաստերացված, առանց կոնսերվանտների և հակաֆոսֆորների, յուղայնությունը 2.5 կամ 3.2%)
- 5) Պանիր «Լոռի» տեսակի - առնվազն 300գ
- 6) Բանան կամ կիվի - առնվազն 500գ
- 7) Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ՏԲ հիվանդներին տրամադրվող սննդային փաթեթների քանակի տատանումը կախված է նշված ժամանակահատվածում այդ վայրերում բուժվող հիվանդների թվի հնարավոր տատանումից:

Սոցիալական աջակցության ենթակա ՏԲ հիվանդների անվանացանկերը մատակարար կազմակերպությանը տրամադրվում են համապատասխան կազմակերպությունների ղեկավարության կողմից:

Բյուջեն՝ 4 032 000 ՀՀ դրամ

Ծրագրի իրականացման առաջին եռամսյակի ընթացքում, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, շաբաթը մեկ անգամ թարմ սննդային փաթեթներ են տրամադրվել նաև ստացիոնար փուլում գտնվող դեղորայքակալուն ՏԲ հիվանդներին:

Նշված ժամանակահատվածում թարմ սննդային փաթեթների համար նախատեսված բյուջեն՝ 3 287 178 դրամ



4. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում/ամբուլատոր բուժման փուլում/

Սոցիալական աջակցություն է տրամադրվում բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (75% DOT) ամբուլատոր պայմաններում բուժվող ԴԿՏԲ հիվանդներին ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2015 թ. հունիսի 30-ը, ամիսը մեկ անգամ:

Ամբուլատոր պայմաններում բուժվող բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (առնվազն 75% ԴՈԹ) ԴԿՏԲ հիվանդները յուրաքանչյուր ամիս կստանան 2 սննդային փաթեթ և 1 հիգիենիկ փաթեթ (տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ/փաթեթը, որի 1 միավորը ներառում է վերը նկարագրված սխեմայով հիվանդին մեկ ամսվա ընթացքում տրվող մեկ անգամ հիգիենիկ և երկու անգամ տրվող սննդային փաթեթները):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
- 2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
- 3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
- 4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
- 5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
- 6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
- 7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
- 8) Պահածոյացված միս - 400գ
- 9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
- 2) Օճառ - 4 հատ (ձեռքի)
- 3) Շամպուն - 400մլ (նոսր մազերի)
- 4) Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող)
- 5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
- 6) Ատամի մածուկ - 50 մլ
- 7) Խոզանակ ատամի - 1 հատ

Բյուջեն՝ 38 297 958 ՀՀ դրամ

SF հիվանդների սոցիալական աջակցության բաշխման համար նախատեսված բյուջեն, վառելիքի ծախսը ներառյալ, կազմում է 3 262 500 ՀՀ դրամ:

5. Դեղակայուն SF հիվանդներին դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյուրերի տրամադրում

ԴԿՏԲ հիվանդները (տուբերկուլոզային կաբինետներում կամ տանը) դեղորայքի ընդունման յուրաքանչյուր օրվա համար, ամիսը 26 օր, ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ստանում են բնական հյուր դեղորայքի տոքսիկ ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Մեկ հիվանդին օրական տրամադրվում է 400մլ բնական հյուր՝ տեղական արտադրության: Հիվանդներին տրամադրվող հյուրի քանակը հաշվարկելիս հաշվի կառնվի նաև հիվանդի առնվազն 75% ԴՌԹ- ի ապահովումը:

Բյուջեն՝ 8 564 468 ՀՀ դրամ

6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն SF հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՌԹ ռազմավարության շրջանակներում



տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

ԴԿՏԲ հիվանդները ամեն օր (շաբաթական 6 օր, ամիսը 26 օր) դեղորայքը ընդունում են բուժաշխատողների (բուժքույրերի) անմիջական վերահսկողության տակ (ԴՌԹ) պոլիկլինիկաներում կամ տանը:

